

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ՝

Կ. Գրիգորյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյանի

ՀՀ Արմավիրի մարզի Հանրապետական գործադիր մարմինների
փարաձքային ծառայությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի
20-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի գործունեության և
սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ /

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների սեփական
եկամուտների հավաքագրման, համայնքներում աշխատավարձերի պարտքերի մարման և
2020 թվականի բյուջեների կազմման գործընթացը առ 20.12.2019թ դրությամբ:

/Հ. Մաթևոսյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը, ՀՀ Արմավիրի մարզպետ
Հ. Մաթևոսյանը ի դեմս Ազգային անվտանգության ծառայության Արմավիրի մարզային
վարչության պետ Արթուր Դաշյանի, շնորհավորեց համակարգի բոլոր
աշխատակիցներին մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթելով բեղմնավոր

աշխատանքային գործունեություն՝ մասնավորապես կարևորելով մարզային նշանակություն ունեցող ստրատեգիական կառույցների պահպանության, անօրինականության դեմ պայքարի և անվտանգության ապահովման գործում մարզային կառույցի մեծ դերակատարումը:

Մարզպետը շնորհավորեց նաև Արմավիրի մարզի նորանշանակ զինվորական կոմիսար Գագիկ Խաչատրյանին՝ վստահություն հայտնելով, որ արդյունավետ աշխատանքի շնորհիվ հնարավոր կլինի մարզում բարձր մակարդակով կատարել զորահավաքային պլան-առաջադրանքները:

Մարզպետը շնորհավորեց նաև ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ, Նորապատ և Ֆերիկ համայնքերում կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում վերընտրված համայնքապետերին՝ մաղթելով նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ:

Օրակարգային «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը հաստատելու մասին» առաջին հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի նիստի օրակարգը:

Անդրադառնալով օրակարգային հարցերին մարզպետն ընդգծեց, որ նմանօրինակ նիստերի և խորհրդակցությունների արդյունքում ամրապնդելու է հաշվետվողականության նոր մշակույթն ՀՀ Արմավիրի մարզում:

Օրակարգային երկրորդ՝ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը ներկայացրեց իր 2019 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությունը՝ շեշտելով, որ բոլոր ծրագրերն իրականություն են դարձել և բավականին լուրջ արդյունքներ են արձանագրվել դաիլիճում գտնվող յուրաքանչյուր անդամի, մարզի յուրաքանչյուր բնակչի ուղղակի կամ անուղակի աջակցությամբ:

Կարևորելով մարզում գյուղատնտեսության առաջնահերթությունը՝ մարզպետ Հ.Մաթևոսյանը ընդգծեց, որ 2018 թվականի համեմատությամբ 2019 թվականին մարզում կրկնապատկվել են հակակարկոտային ցանցապատ փարածքները, ջերմոցները և ջերմատները, կաթիլային ոռոգվող հողափարածքները և սառնարանային տնտեսությունները: Մարզում այս փարի պտուղ-բանջարեղենի արտադրությունը, բացառությամբ կարտոֆիլի, գերազանցել է նախորդ փարիների ցուցանիշը: Հաշվետու փարում վերամշակող ձեռնարկությունների կողմից մթերվել է 12464 տոննա գյուղմթերք՝ պտուղ-բանջարեղեն, որը 60%-ով գերազանցել է նախորդ փարվա ցուցանիշը: Խաղողի մթերումն էլ կազմել է 82 հազար 352 տոննա, որը 30 հազար տոննայով գերազանցել է նախորդ մթերման ծավալը:

Հաշվետու փարում մարզպետարանի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է շուրջ 1720 հա թաքնված այգի, որոնք բերվել են

օրինական դաշտ և տարբեր համայնքների բյուջե է մուտքագրվել 34 մլն դրամ: Կտրուկ ավելացել է նաև ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման ցուցանիշը, որն այս պահի դրությամբ 280 մլն դրամով գերազանցում է 2018 թվականի ամբողջ հավաքագրումների մակարդակը: ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ էլ առաջիկա օրերին դրամական աջակցություն կցուցաբերվի կարկտահարությունից 50%-ից ավել վնաս կրած մարզի 18 համայնքի 1095 գյուղացիական տնտեսությունների:

Անդրադառնալով հաշվետու տարում մարզում իրականացված ծրագրերին և ներդրումային քաղաքականությանը՝ մարզպետն այն համարեց հաջողված՝ նշելով, որ պետական բյուջեի միջոցներով, ինչպես նաև պետական աջակցությամբ իրականացվող համաֆինանսավորման ծրագրերի, հայաստանյան և դոնոր կազմակերպությունների, առանձին անհատների ու բարերարների աջակցությամբ և այլ միջոցներով մարզի սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ավելի քան 209 ծրագիր է իրականացվել՝ 12 մլրդ դրամի շրջանակում: Մարզպետ Հ.Մաթևոսյանը ըստ ոլորտների և համեմատական տվյալներով ներկայացնելով համապատասխան ծրագրերը մասնավորապես ընդգծեց, որ միայն 46 համայնքում իրականացվել են 37 կմ երկարությամբ ճանապարհաշինարարական աշխատանքներ, որոնք 10կմ-ով ավել են վերջին երեք տարվա կտրվածքով: 24 համայնքում իրականացվելու է խմելու ջրագծերի ներքին ցանցի կառուցում, վերակառուցում և վերանորոգում, ևս 9-ում՝ ոռոգման համակարգերի բարելավում: 26 դպրոցում և 9-ը մանկապարտեզում իրականացվել են հիմնանորոգման, մասնակի վերանորոգման, ջեռուցման համակարգի ներդրման և գույքի ձեռքբերման աշխատանքներ: Վերանորոգվել է 4 մշակույթի տուն: 16 համայնքում իրականացվել է 14 կմ արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում, հաստատվել է 5 դպրոցի կառուցման ծրագիր:

Որպես խոշոր ներդրումային ծրագրեր՝ մարզպետն առանձնացրեց 4 համայնքում մասնավոր ընկերությունների կողմից 4,5 մլրդ դրամի շրջանակում 777,2 հազար խմ ընդհանուր տարողությամբ ջրամբարների կառուցումը, 7 համայնքում 163,39 հա ինտենսիվ այգու հիմնումը, 6 գործարարի կողմից գործունեության ընդլայնումը ՀՀ Արմավիրի մարզում, որի արդյունքում ձեռք է բերվել 2820 հեկտար հողատարածք՝ հիմնականում ընկույզի, պիստակի, ունաբի, նշի այգիներ հիմնելու, մթերող ձեռնարկություն կառուցելու և չրի արտադրությունն ընդլայնելու նպատակով:

Օրակարգային երրորդ հարցով մարզպետ Հ.Մաթևոսյանը ներկայացրեց տեղական ինքնակառավարման ու վերահսկողության, կադրային քաղաքականության, սեփական եկամուտների հավաքագրման ու դրամական աջակցությունների մասով իրականացված աշխատանքները, ինչպես նաև 2020 թվականի համար նախատեսվող ծրագրերը՝ ընդգծելով, որ միասնական և բավականին արդյունավետ աշխատանքի արդյունքում ամփոփում ենք մեր մարզի համար աննախադեպ ձեռքբերումներով և հաջողություններով առանձնացող մի տարեթիվ, որն ամուր հիմք է նախապատրաստել ավելիին հասնելու և մարզային տնտեսությունը նոր մակարդակի վրա դնելու համար/հաշվետվությունը կցվում է/:

Օրակարգային հարցերի քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Հ.Մաթևոսյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

2/1/2020

X 

VERIFIED OCSP 2/1/2020 15:52:39 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Արձ.՝ Մ.Առուշանյան